ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1263 - Ա

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆԻՆ, ՆԱԻՐՈՒՀԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ, ՕԼԳԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ ԻՍՊԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի՝

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահ Ռուստամ Բադասյանին, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի համալիր հարկային ստուգումների վարչության պետի տեղակալ Նաիրուհի Ավետիսյանին և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային վարչարարության կազմակերպման դիտարկման և հսկողության վարչության ընթացիկ հարկային եկամուտների հաշվառման բաժնի պետ Օլգա Աբովյանին 2022 թվականի նոյեմբերի 9-11-ը գործուղել Իսպանիայի Թագավորություն (Սևիլիա)՝ «Թափանցիկություն և հարկային տեղեկատվության փոխանակում հարկային ոլորտում» համաշխարհային համաժողովի լիագումար նիստին մասնակցելու նպատակով:

2. Ռուստամ Բադասյանի, Նաիրուհի Ավետիսյանի և Օլգա Աբովյանի՝ Իսպանիայի Թագավորություն գործուղման ծախսերը կատարել Հայաստանի

Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

3. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝ գործուղումից վերադառնալուց հետո եռօրյա ժամկետում Իսպանիայի Թագավորություն գործուղման արդյունքների մասին հաշվետվությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

26.10.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ